Շաբաթ 30 Նոյեմբերի № 48 — 1874 — Շաբաթ 30 Նոյեմբերի № 48

Լրագրի միջոցով որևիցէ յայտարարութիւն տպագրել տալ ցանկացողը պէտք է 10 միջակ տառերի համար վճարէ 1 կոպէկ: Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն և օտար լեզուներով:

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հրատարակվում է ամեն շաբաթ օր մի թերթ: Տարեկան բաժանորդագրութեան գինն է 7 ռ: Ստորագրվել կարելի է խմբագրատանը (Ս. Վարդանեանի տանը) և Հաւ. Ենֆիաճեանցի խանութում:

ԺԷ ՏԱՐԻ — ԼՐԱԳԻՐ — ԺԷ ՏԱՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

FRANCE ET PAYS ETRANGERS

S'adresser pour les annonces et les abonnements a M. M. Bouêt et C-° (Office de publicité), 23 rue de Chaussée-d'Antin
PARIS.

ԱՌԱՋԻԿԱՅ **1875** ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՐԱԳԻՐԸ

կը հրատարակուի շաբաթը մի անգամ

ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ, ԾՐԱԳՐՈՎ ԵՒ ԴԻՐՔՈՎ

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 7 Ռ.

Թիֆլիսում ստորագրվել կարելի է.

ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ, (պարոն Ս. Վարդանեանի տանը, հեռագրի կայանին կից, Վանքի թաղում).

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ, որ գտանվում է պ. Հ. Ենֆիաճեանցի եւ ընկ. տպարանում (Գոլովինսկի պրոսպեկտի վերայ, բժշկապետ Մ. Ռոտինեանցի տանը եւ

պ. Համբ. Ենֆիաճեանցի ԾԽԱԽՈՏԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ (Գվարդեյսկի փողոցի վերայ, Գեներալ Արծրունու պալատում № 3):

Օտար քաղաքացիք թող բարեհաճին դիմելու ուղղակի խմբագրութեանս հետեւեալ հասցէով՝

Въ редакцію Армянской газеты „ПЧЕЛА АРМЕНІИ" въ Тифлисъ.

Խմբագրութիւնս խոնարհաբար խնդրում է այն անձանց, որոնք չեն վճարել մեր լրագրի բաժանորդագրութեան գինը, բարեհաճին շուտով ուղարկելու այն խմբագրութեանս:

Թիֆլիս 30-ին Նոյեմբերի

Գ. Եւանգուլեանցի նամակը, որ տպած էր Կովկաս լրագրի 136 համարում յիրաւի ծանր տպաւորութիւն է գործում ամեն ճշմարտասէր մարդու վերայ, տեսնելով, թէ որպիսի անկանոնութիւնք են գործվում և զանցառութիւնք լինում այնտեղ, ուր հասարակաց շահը միայն դեր պիտի խաղայ, ուր անձնականութիւնն ու եսականութիւնը բոլորովին տեղ չը պիտի ունենան, ուր ամենափոքր զանցառութիւնն էլ ծանր է, որովհետև նորա հետևանքները բոլոր քաղաքի վերայ են տարածվում, նորա շահերին վնասում: Բայց ո՞վ է մեղաւոր, որ այսպիսի զանցառութիւնք գործվում են, որոնք Թիֆլիզ քաղաքի ոչ գլուխն, որովհետև փոխարքայանիստ է, ոչ էլ նորա հասարակութեան պատիւ կարող են բերել. ըստ որում այս հասարակութիւնը այնքան զարգացած է համարվում, որ ստացել է ինքնակառավարութեան իրաւունք: Մեզանում նոյն իսկ հասարակութիւնն է, որ իւր անտարբերութեամբ դէպի հասարակական գործերը շատ բան գործել է տալիս իւր մէջ, որ չը պիտի գործվէր: Հասարակութիւնը պիտի հասկանայ, որ իւր պատիւն ու շահը բարձր է ամեն անհատի շահից և պատուից. եթէ հասարակութիւնը ինքը իւր պատիւը չի պահել իւր մէջ գործել տալով իւրաքանչիւր անհատի իւր ընդունակութեանց համեմատ յօգուտ հասարակաց, նա չի ունենալ և իրաւունք գժգոհ լինելու ամենայն զանցառութեանց համար, որ լինում են ի վնաս նորան: Թող նա զրկվի ամեն առողջապահական միջոցներից, թող կեղտոտ ջուր խմէ, թող միշտ փոշի կուլ տայ, թող չունենայ մաքուր օդ, թող գիշերը մթութեան մէջ ոտքն ու ձեռքը կոտրէ և լռէ, որովհետև դորա բոլոր պատճառը իւր անտարբերութիւնն է, որ արհամարհելի, շահասէր, բդաւոր ու գործի անընդունակ մարդոց հանդէս է տալիս, որով իւր տնտեսութիւնը խանգարում:

Մենք հակառակ չենք, որ հասարակութեան ամեն անդամ մասնակցէ նորա գործերին. միայն պէտք է հասարակութիւնը այնպէս հսկէ իւր գործերին, որ ամեն գործի համար գործ գտնվի անձն, որ ունէր նորա համար յարմարութիւն: Քաղաքի տնտեսութիւնը այնքան բազմատեսակ է, որ ամենազան ընդունակութեանց տէր մարդիկ կարևոր են նորա համար և պէտք է այն ևս հասկանալ, որ ամեն հասարակական գործակատարներն էլ հաւասարապէս պատուաւոր են, եթէ նոքա խղճմտանքով և արդարութեամբ կատարում են իրանց պաշտօնները: Որքան կարևոր են քաղաքի վարչութեան մէջ, նորա բարօրութեան համար, տեսական անտեսագէտներ, այնքան կարևոր են և գործի մարդիկ, փորձառու [illegible] ժեշտ են գործի յաջողութեան համար, մէկը իւր գիտութեամբ և միւսը իւր փորձառութեամբ, որովհետև քաղաքի գործերը բոլորն էլ իրականապէս պիտի կատարվին: Հասարակութիւնը մեծ է. ո՞վ է խորամուտ եղել նորա անհատների ընդունակութեանց մէջ, ո՞վ գիտէ ի՞նչ ընդունակութիւնք ծածկված կան. բայց կեանքը նրանց հանդէս չէ դուրս բերել: Ահա այս պիտի լինի հասարակութեան գործը: Հասարակութիւնը պիտի հասկանայ, որ իւր ամեն սխալի հետևանքները կպչեն և իւր ապագայ սերնդի վերայ. հարուստ սերունդը կարող է աղքատանալ և աղքատինը հարստանալ կամ ոչ, բայց հասարակութեան անհոգութեամբ և անտարբերութեամբ նորա միայն կը վայելեն ի վնաս իւրեանց անմաքուր օդն ու ջուրը և զուրկ կը մնան և այլ առողջապահական միջոցներից: Ո՞վ է պատասխանատու այս վնասակար և անմխիթար դրութեան. հասարակութեան անտարբերութիւնն անշուշտ, եթէ յիրաւի կը մնայ նա նոյնը, ինչպիսի էր մինչև ցայժմ: Չը կարծենք, որ յիրաւի քաղաքի վարչութեան համար գերբնական անձինք են հարկաւոր. բնաւ ոչ. հարկաւոր են միայն անփառասէր, անշահասէր, հասարակութեան լաւութեան համար սատյաւ անտես անձինք, որովհետև քաղաքի վարչութեան գործունէութիւնն գլխաւորապէս նորա անտեսական շրջանի մէջ պիտի լինի և այս նշանաւոր հարցից կախված է մեծ մասամբ հասարակութեան ապագայ սերնդի առողջ և բարօրեալ վիճակը:

ԱԶԳԱՅԻՆ

Մեղուի 46 համարում տպած տեղեկութիւնքը Կ. Պոլսի Թատրոն և Ասիա լրագիրների արգելման մասին շատ խոր տպաւորութիւն պիտի գործէր ամեն մտածող ազգայնոց վերայ: Դա մեզ համար շատ տխուր երևոյթ է. որովհետև ապացուցանում է, որ ազգային վարչութիւնը, այնքան ծանր փորձերից յետ էլ, որոնց նա ենթարկվեցաւ իւր անխոհեմութեամբ և թուլութեամբ և մեծամեծ զոհեր զոհել տալով ազգին, շատ ազնիւ, գործունեայ և անձնանուէր անձանց կից և շահասիրութեանց տարակոյ դարձնելով և ազգային գործերի հանգլխից զրկուածք հեռանալու առիթ տալով, այսօր նոյն անխոհեմութիւնն ու ծայրայեղ թուլութիւնն է ցոյց տալիս:

Մասիսը շատ փափուկ և նուրբ կերպով ցոյց է տալիս, որ Ասիայի խափանումն մի անքաղաքականութեամբ ամբաստանված եկեղեցականի դէմ յարձակվելու առթիւ, անաչառ արդարասիրութեան փորձ լինելից շատ և շատ հեռի է, այն ինչ նոյն վարչութեան աչքի տակ այլ լրագիրք և օրագիրք բարձրաստիճան և արժանաւոր եկեղեցականի դէմ անպատիժ ամենայն հայհոյութիւնք և զրպարտութիւնք թափում են և վարչութիւնը լռում է: Այս կողմնապահութեան և կուսակցութեան օգուտ նշան է, որ նոյնպէս վարչութեան թուլութեան ապացոյց է:

Երբ մի իշխանութիւն իւր ձեռին չունի արդարութեան կշիռը, երբ նա անաչառապէս պատժել և վարձատրել չէ ձգտում կամ չէ կարող, երբ նա փոխանակ ուղղապէս ներգործելու կողմնակի միջոցներ գործ դնելու ձգտում է, այդպիսի իշխանութիւնը չէ կարող պատկառանք և [illegible] ներշնչել. Իշխանութիւն [illegible] կուսակցական ոգու անձնատուր է, նա կըրերևում է, ահա այս վիճակի մէջ է երևում դեռ Կ. Պոլսոյ ազգային վարչութիւնն, որ շատ անմխիթար երևոյթ է:

Կրօնական ժողովը կարգադրում է, որ եկեղեցականաց վերայ նկատված թերութիւնք առաջ իրան յայտնվին, ինքն կքննէ և կարևոր անօրէնութիւնն կանէ և յետոյ հրապարակ կը հանէ, բայց իրողապէս հակառակը կը տեսնվի: Մի ազգային լրագիր կը խափանվի, որովհետև յարձակվել էր մի անքաղաքականութեամբ ամբաստանված եկեղեցականի վերայ, և այս խափանումն կը լինի առանց դատի: Միւս կողմից մի

ՀԻՄԻ Ո՞Վ Է ՄԵՂԱՒՈՐ.

—Հա, հա, հա, վո՞նց է, առա կանամ թէ չէ... տօ ինձ լսէ, իմ ձեռնեմէն ամեն բան դուս գուգայ:

—Ղօչաղ, իս ու իմ հոգին, ղօչաղ......ամա, գիտես ինչ, Մաթուզ, իս էն մէկի ալլացնելուն ենէնց չուրախացայ, վո՞նց որ Գասպարի մօգվէրդի տալուն ու նրան մեր օրչէստովումը խայտառակելուն:

—Ջէր հալա մուլափ, թէ իս նրա գլխին ինչ օյին իմ բերում...... ինձ չէին ճանչնում... իս չէի, վուր մէ մանուսին բերդումը փտեցնել տվի...... ինչի — էնդուր վուր նա ուզում էր ինձ մօգվէրդի տայ, ամա ինքն ընկաւ խաթի ու դաւի մէջ......

—Խօսք չունիմ, ինչ ասիմ...... քու ջամարդութենի խաբարը, իս ու իմ հոգին, կաղէթումը գրելու բան է...

Այս խօսքերից նրա խօսակիցը կնճռեց իւր երեսը և շուռ գալով, ինչ որ քթի տակ մըռմըռաց...

—Ջէր ո՞վ գիտէ, գլխումդ շատ պլաններ ունես դարսած, մէկ էլ էնչախը մինձ թամաշէք կու տեսնինք. շարունակեց այն մարդը իւր խօսակցից չը հեռացնելով իւր աչքերը:

—Հըմ......հըմ... արտասան կանեց նա. իս էնէնց բան սարքիմ, վուր նրանք ինձ երնէկ տալիս ըլին...... ջէր մուլափ, էս մէր գուրծը վէրջացնինք...

Վերոգրեալ խօսակցութիւնը պատահեցաւ այդ երկու անձանց մէջ մեզանից շատ հեռաւոր երկրում 187... թուի ամառուայ սկզբներում, երբ դրանց պաշտօնած գործերը դեռ ևս պահանջում էին մեծ հետևողութիւն և մեչակութիւն:

Մաթուզ անունով երիտասարդը, որ, ինչպէս ինքն էլ ասում էր, ջիգրու պէտք է գլուխ բերէր այդ գործը, հեռացնելով իւր ընկերակիցներից շատերին, որոնք նորա հետ ևս նշանակված էին այդ գործերի համար, որ ինքը մենակ մնայ ու բոլոր փառքն ու պատիւը իւր խօսակից անձին հետ վայելէ:

Սկզբում, որպէս թէ գործը լաւ էր գնում. մէկ այն պատճառաւ, որ նրանց աշխատանքին նայող ոչով չը կար և մէկ էլ, որ նրանք մեծ եռանդով ինչ որ շատ երկար բան էին դուս գրում, գրքից բաց թողնելով այն ամենայն բան, ինչ որ նրանց կարճ խելքով հարկաւոր չէր:

—Մաթուզ, մի մի անգամ ասում էր ընկերը միւսին, ախար էստի լուսահոգի Իվան Բարխանցի անունն է գրած...ինչ անիմ, նրա անունն էլ գրիմ, թէ նրա նասլէդնիկներունը...

—Գրէ օղորմած հոգի Իվանի անունը........ նրա վուրդիքը մէր կուռը չին ըլի...

—Պօլէստկէն էն աշխարհքը վո՞նց գրիմ ու մէկ էլ մեռածն էլ չի գայ...

—Էդ կու նշանակէ թէ վուչ Հասանին ու վուչ էլ Հուսէյինին... բօշ ջվալ, բօշ չանախ... կուդա իգօլկայ, տուդա ի նիտկայ... դուն էտէնց բաներ շատ գթի, իս շատ ուրախ իմ, թէ միզ հիդ ինադ անողներու համա էլ մէ բան կու գթնիս, վուր նրանց էլ էտէնց կօլօլացնինք ու դամը դնինք, դուն ինձ երգինքը կու հասցնիս դրանով, Մարգար ջան:

Այնուհետև Մարգարի ու Մաթուզի բոլոր ջանքն ու աշխատանքն այն էր, որ մէկ այդպիսի կօլօլացնելու բան գտնին ու իրանց հետ ինադ պահող անձանց ալլացնեն:

Աշխատանքը, ճշմարիտ, մեծ էր, և իզուր չէր որ այն քաղաքումը շատ էին խօսում թէ ինչպէս այդ երկու անձինք զոհել էին իւրեանց կեանքը օր ու ցերեկ աշխատելով հասարակական գործերի վերայ...

—Մաթուզ, էստի մէկ Իվան Պապովի վըրայ շտրաֆ կայ, դրանցպէսներուն խօմ չըպիտի գրինք...

Այս խօսքով մօտը նստած Մաթուզը վեր թռաւ տեղից և նայեց գրուածքում...

—Ա՛խ...... էն Պապովը չէ ափսուս... ամա վուչինչ...... ով գիտէ, ով է...

—Այ էստի երկուս էլ ուրիշնիր կան, ամա սրանք խատակ ին...

—Գիխուննոցն էլ մօշլա արա......... ձեռքը թափ տալով, ասաց Մաթուզը, և դարձաւ իւր տեղը:

Մարգարը շշկլուած նայում էր Մաթուզին, չը հասկանալով նորա կարգադրութեան միտքը......

—Վո՞նց կուլի ախար, մէկէնիրը խատակ ին......

—Մօշլա արա, ասում իմ...... դրուստ չէինք իմանում, կօսինք, թէ վուրն էր նրանցից շտրաֆի տակ ու պրծաւ......

Կարգադրութիւն տրուեցաւ ու կատարուեցաւ. մէկ Պապովի տեղ, երկքը շտրաֆի տակ ընկան ու զրկուեցան այն գրուածքի մէջ չարված մարդկանց անուններին հետ դասուելուց:

Գրիչը գրում էր, գրիչն էլ ջնջում էր... ճըռ-ճըռ...... Եօսէֆին էլ կօլօլացնինք, Մարգար, դա մէր մարդը չէ, միզ համա ձէն չի տայ... ճըռ ճըռ գրում ու ջնջում էր գրիչը ինչպէս որ սեղմում էր հաստատելից ու փուտուրօ գլուխը...

—Վա՜յ վա՜յ...... մէր Թաթարխանովի վըրայ շտրաֆ է էլի... ջալդ, ջալդ, վերկաց Մարգար ջան, վաղէ նրան իմաց արա. թէ չէ կօրանք... վա՜յ, վա՜յ, համա լաւ էլաւ...... Մարգարը բաց թողեց ձեռքիցը իւր գրիչը և շտապով մէկ գտակ առնելով, վազեց դէպի դուրսը եւ երբ փողոց դուրս եկաւ և ծածկեց գլխին, այն ժամանակը միայն նկատեց, որ իրա գլխին ոչ թէ իր գդակն է, այլ շլապա. արա մի լաւ քաղքի չուխեն ինչ սաղ կու դայշլայէն...նա վերադարձաւ փոխելու.

—Վա՜յ... ջէր էստի իս, թէ էկար......

—Մէր պլուշի շլապէն իմ վէկալէ, գդակիս մագիար:

—Բաս ջալդ գնա...... Մարգար, մուլափ, գըլուխը ժաժ տալով և յիմար ժպտալով ասաց Մաթուզը, հիմի իմ իս հասկանում, թէ ինչ լաւ բան էլաւ, վուր մինք մէնակ մնացինք ու էս լօնդի բանը դիփ մինք պիտի գրիմ...... թէ Գասպարը էստի կլէր, ինչ կու թողնէր, Թաթարխանովի մօտ քիզ ղըգելու, ան մէկէնեւրուն կօլօլացնելու...... մախլաս, մէր բանը աջող է գնում:

—Դիփ քիզմէն, դիփ քիզմէն պիտի մէր օրչէստը շնորհակալ ըլի... ասաց Մարգարը ու դուրս վազեց սենեակից:

—

Աշունը ոտք կոխեց այն քաղաքը. քաղաքի բնակիչները ոտի էին կանգնել, շտապով վազում էին Մաթուզի ու Մարգարի շինած գործերը քննելու:

—Աստուած, երգինք, գետինք, զօրով են վըզիս շտրաֆ փաթթի, ախար իս շատ ակուրատնի մարդի իմ...... գանգատվում էր Օսէփ Գայլաբէկովը, պիրիբիթ օրչէստն է ինձ պարտ փուղ...

—Գէնացվալէթ, տաս տարի է ինչ իմ լուսահոգի մարթը մեռել է, նրան սաղցրել ին ու նրա անունն էն գրի դաւթրումը, ծիկա էր տալիս սալօփում կօլօլած մէկ պառաւ կին...

պլ եկեղեցական, ազգին շատ ծառայութիւնք արած, դատ կը պահանջէ վարչութիւնից, իրաւունք կը պահանջէ, պատիւ կը պահանջէ իւր յանցանաց համար, վարձն իրան թողնելով, և վարչութիւնը լուռ ու մունջ է, այն ինչ լրագիրներն ու օրագիրները չեն դադարում նորա վերայ հայհոյանք, թշնամանք և զրպարտութիւնք արձակելից:

Թատրոնը արգելվում է և վարչութիւնը յանդէտս է ձևանում, այն ինչ պատճառն իբրև եկեղեցականաց ոմանց դէմ ազատ լեզու բանացնելն է եղել: Երբ ժողովրդեան մէջ այս դէպքի առթիւ դժգոհութիւն է երևում, վարչութիւնը ի չքմեղս լինելով յանձն է առնում միջնորդելու բարձրագոյն Դրան առաջ թատրոնի համար: Ի՞նչ է կարծում ազգային վարչութիւնը—միթէ՞ հասուն մասը ծածուկ կարող էր մնալ թատրոնի արգելման համար Բարձրագոյն Դրան առաջ եղած միջնորդութիւնն:

Այս այսպէս լինելից յետ, էլ ինչ նշանակութիւն և յարգանք կարող է պահանջել վարչութիւնն ժողովրդից, երբ ինչպէս իրաւացի կերպով ասում է Մասիսը, նորա գործունէութիւնը հեռի է անաչառ արդարասիրութեան փորձ լինելից:

Այսպիսի կողմնակի և խորամանկ ճանապարհներով գործել ջանացող իշխանութիւնը չէ կարող ազդեցութիւն գործել և արդիւնաւոր լինել. և այն մի իշխանութիւն, որոյ գոյութիւնը կախված է լոկ ազգի կամաւոր և բարոյական զգացմունքից, որոյ գոյութիւնը կարող է յարատևութիւն ունենալ լոկ ազգին արած ծառայութիւնից, չունենալով ոչ մի բռնի զօրութիւն իշխելու ոյժով: Նորա միակ գոյութեան միջոցն է իւր անաչառութիւնն, որով նա պիտի ստանայ ազդեցութիւն և կշիռ:

Մենք, ինչպէս շատ անգամ էլ ասել ենք, էլի կրկնում ենք, որ այդ գաղտնի մեքենայութիւններն և ճիզուիտական միջոցներն այնքան փտած և նեխած գործիները [illegible] է յօգուտ ազգի և իւր, կերպարանափոխվելով բոլորովին՝ գործելու բաց և արձակ, ամենայն անաչառութեամբ: Այս ճանապարհն է նորա փրկութեան միակ ճանապարհը: Զարկել հարկաւոր է մեկին, թող հրապարակաւ դատէ և դատապարտէ, վարձատրել հարկաւոր է, նոյնպէս գործէ: Թող հաւատի լինի, որ այսպէս գործելիս, նա միշտ զօրեղ կը լինի, բազմութիւնն իւր կողմը կունենայ և իւր նշանակութիւնը ստուեր չի լինել:

ՄԱՍԻՍՈՒՄ ՏՊԱԾ Է ՀԵՏԵՒԵԱԼ ՆԱՄԱԿԸ ՍՐԲ. ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ.

—

...... Խմբագիր էֆէնտի:

Ասիա լրագրին՝ ազգային Ընդհանուր ժողովը կոխելով ցրուելու համար ժողովուրդը քանիցս գրգռելուն վրայ, ցաւօք սրտի և գրեթէ ակամայ՝ Բ. Դուռը գիր գանգատանաց գրել պարտաւորեցաւ Ազգ. վարչութիւնը:

Ի սկզբանէ անտի իմ անձիս դէմ եղած հրապարակութեանց նկատմամբ անոխակալ էի, և դարձեալ այսօր նոյնն եմ, սակայն Ազգ. վարչութեան և Ազգ. Ընդհ. ժողովոյ դէմ անարգանք՝ աններելի են: Եթէ ժողովն ցրուել դիւրին ալ լինի, սակայն վերստին կանգնելն ամենադժուար է, և գուցէ անկարելի...

Իմ մասնաւոր կարծիքս էր՝ լրագրաց համանգամայն յայտարարել, որ հին և նոր ազգային պաշտօնակալաց դէմ անարգաբար և անվայել կերպով չը խօսին:

Խիստ շատ անգամ ցաւ յայտնած եմ ժողովոյ մէջ, և այս անգամ ահա հրապարակաւ կը խօսիմ, թէ խիստ դառն և անտանելի է ինձ համար լսել՝ մեր նախորդ Ամեն. Խրիմեան սրբազանի վրայօք անհամ, կծու և պախարակիչ խօսքեր: Խրիմեան սրբազան իւր վարուքն, բարուք և հմտութեամբք արժանաւորագոյն եկեղեցական մ'է: Ես և նա՝ միայն մէկ կէտի մէջ յանցաւոր ենք, այսինքն Պատրիարքութիւնը ընդունելնուս մէջ...

Խրիմեան սրբազան ոչ ազգային հասոյթներն է վատնած, և ոչ ի հաճոյս իւր շռայլած: Քաղաքական ժողովոյ վսեմ. Ատենապետ Պէյն ալ ինձ համամիտ է այս մասին, թէ նախորդ Ս. Պատրիարքի ամսականներն իւր պաշտօնավարութեան օրէն սկսեալ՝ պէտք է 10000 ական ղրշ. հաշուել, և այսպէս կնքել նորա հաշիւն. քանզի Խրիմեան սրբազան փորձառու չըլինելուն համար՝ 5000 ղրուշով խոստացեր է ի սկզբան անդ ընել զայն, զոր անկարելի է և 10000 ղրուշով ի գլուխ հանել պատշաճապէս:

Նմանապէս խիստ մեծ ցաւ կ'զգամ երբ կը տեսնեմ որ իւր հանճարովն և ազգասիրութեամբ Ազգիս պարծանքներէն մին արժանապէս համարուող վսեմ. Գրիգոր էֆէնտի Օտեան, և իւր արժանաւոր տաղանդներովն անկէ ոչ նուազ նշանաւոր Տիգրան էֆէնտի Եուսուֆեան՝ չարաչար կը զրպարտուին և կը բամբասուին:

Միւս կողմանէ ինձ կ'ըսեն, թէ այս ինչ անձը Քաղ. ժողովոյ և այն ինչ անձը կրօն. ժողովոյ մէջ պէտք չէ բազմին: Կը պատասխանեմ, թէ Սահմանադրական Պատրիարք մ'՝ ժողովական մ'արտաքսելու իրաւունք չունի. եթէ կան դատախազներ, կարող են դիմել ժողովոյ՝ օրինաւոր բողոքագիր ի ձեռին:

Խղճիս վրայ բեռ մ'եղած էին այն սոսկալի հայհոյութիւններն՝ որ ի կրից կը ժայթքին, և որ իմ ամենեցուն հաւանութեամբ ընտրուելուս առթիւ պէտք էին շիջանիլ, բայց և այնպէս տակաւին չըմարեցան: Քանիցս եկեղեցեաց բեմերէն աղաղակեցի, որ եթէ այս ընթացքը տևէ՝ ես չը պիտի կրնամ շարունակել զայս պաշտօնը, նոյնը կը կրկնեմ և այսօր հրապարակաւ.

1874 Հոկտ. 26
ի Պատրիարքարանի
Հայոց

Ողջունելով զձեզ Մնամ աղօթարար Պ. Կ. Ներսէս
Արքեպիսկոպոս:

Ահա և Ասիա լրագրի խմբագիր պ. Փորթուգալեանի պատասխանը Սրբ. Պատրիարքի նամակին:

—

... Խմբագրապետ էֆէնտի.

Ամեն. Սրբազան պատրիարքին մի նամակը կարդացի պատուական Մասիսի 1602 թիւին մէջ:

Ուրախ եմ: Ասիա լրագրին խափանումը թէպէտ ինձ համար վնասաբեր՝ սակայն չարժաւէտ ես եղաւ, որ մի կարևոր ճշմարտութիւն հուսկ ուրեմն պաշտօնապէս կը հրատարակուի:

Բ. Դուռը Պատրիարքարանի առաջարկին համեմատ Նիւթական վնասի ենթարկելով՝ նիւթապէս պատժեց զմեզ. բայց Ս. Պատրիարքը իւր այդ նամակով բարոյապէս կը պատժէ այն ամեն թերթերը՝ որք Ամեն. Խրիմեան Սրբազանին, վսեմ. Օտեան էֆէնտիին, ինչպէս նաև Մեծ Եուսուֆեան էֆէնտիին դէմ չարաչար զրպարտութիւններ և բամբասանքներ կը հրատարակեն:

Այսչափ ժամանակէ հետէ այդ զրպարտութիւնները և նախատանքը հրապարակաւ կը կրկնուէին ամեն օր, բայց մինչև ցայսօր մի պաշտօնական ծանուցում իսկ չէր տեսնուած, որ հերքէր զայս...

Ես չը պիտի խօսիմ հոս Սրբազան Պատրիարքի նամակին այն մասին վերայ, որով կը յայտարարէ թէ ինք՝ իբր սահմանադրական Պատրիարք՝ կաշկանդուած է և չէ կարող թող այն ինչ անձը կրօն. ժողովին մէջ բազմի: Ես չեմ ուզեր մանրամասն բացատրել հոս թէ մի Սահմանադրական պատրիարք այս պարագային մէջ ինչ աստիճան իրաւասութիւն ունի, այլ կուզեմ խօսիլ նամակին այն կէտին վրայ միայն, որ ուղղակի ինձ կը պատկանի. իբր խմբագիր Ասիա լրագրին:

Սրբազան պատրիարքը կը գրէ, թէ «Ասիա լրագրին՝ Ազգային Ընդհ. ժողովը կոխելով ցրուելու համար ժողովուրդը քանիցս գրգռելուն վրայ, ցաւօք սրտի և գրեթէ ակամայ Բ. Դուռը գիր գանգատանաց գրել պարտաւորեցաւ Ազգ. Վարչութիւնը»:

Արդ՝ կը խնդրեմ Սրբազան Պատրիարքէն և «գիր գանգատանաց» գրող Վարչութենէն, որ յայտնեն պարզապէս թէ Ասիայի որ թուին մէջ ժողովուրդը հրաւիրած եմ, որ Ազգ. Ընդհ. ժողովը «կոխելով ցրուէ»:

Ստոյգ է թէ մենք քանի անգամ կրկնած եմք, որ Ազգային Ընդհ. ժողովը իւր պատկառելի դիրքը և իւր բարոյական մեծ նշանակութիւնը կորուսած է ժողովրդին առաջև, քանի որ ժողովուրդը Քրիստոստուրի, Փափազեանի և Ամբրոսեանի պէս ամբաստանեալ անձեր կըտեսնէ հոն, որոց համար «օրինաւոր բողոքագիր 'ի ձեռին ժողովոյ դիմած» և փոխանորդներ կարգելով դատ վարել ուզած է: Բայց ազգային վարչութիւնը չէ հաճած: Քանի անգամ կրկնած եմք որ Ազգ. Ընդհ. ժողովը անհրաժեշտ հարկ է որ «լուծուի» և այնպիսի եղանակով և այնպիսի տարրերէ կազմուի, որ Թուրքաստանի Հայ Ազգին բուն ներկայացուցիչը հանդիսանայ. բայց երբեք չեմք գրած թէ պէտք է որ ժողովուրդը «կոխելով ցրուէ» Ազգ. Ընդհ. ժողովը:

Այլ սակայն մեր յանցը այդ բառերով նշանակուած կը տեսնեմք Ս. Պատրիարքին հրատարակած նամակին մէջ:

Ուրեմն Սրբազան Պատրիարքը և Ազգ. վարչութիւնը կամ այնպէս կը համարին թէ Ընդհ. ժողովը կոխելով ցրուելէն զատ օրինաւոր միջոց չը կայ, որով կարելի լինի լուծել զայն, և կամ մեր գրուածները հարևանցի կարդացած են:

Այս վերջինն աւելի հաւանական կը թուի մեզ. զի երբ մի անգամ խառն ժողովը ըղձեց իւր ատեանը հրաւիրելով, պատուիրեց, որ Մամբրէ եպիսկոպոսին նկատմամբ գրած ատեննիս՝ գազան չը կոչեմք զայն, պատասխանեցինք, որ թէև շատ բաներ գրած եմք նորա նկատմամբ, բայց երբէք գազան չեմք անուանած. եթէ կը պնդէք. ցուցէք այդ թերթը: Ցայնժամ Ս. Պատրիարքը յայտարարեց ասելով թէ չեմ պնդեր այդ մասին, զի ես ծանր զբաղումներէ պաշարուած՝ ժամանակ չեմ ունենար լրագիրները ամբողջապէս աչքէ անցունել, այլ հազիւ կրնամ հարևանցի կարդալ զնոսա եւ այլն:

Սակայն զարմանալի կէտը սա է, որ Սրբ. Պատրիարքին՝ ուրիշ լրագիրները հարևանցի կարդացած ատեն՝ նոցա դատապարտելի գրութիւնները իւր աչքին առջևէն կը փախչին, իսկ մեր լրաթերթները հարևանցի կարդացած ատեն՝ չգրածնիս ալ գրուած կը տեսնուին:

Այս ալ գուցէ մեր դժբաղդութենէն է:

Խնդրեմ...... խմբագիր, որ անկողմնակալ ոգւով շնորհ անէք ներկայս ալ հրատարակել և Պատրիարքարանի ձեռքով խղդուած մի ձայնի արձակած սոյն բողոքն ալ՝ Ս. Պատրիարքին Նամակին հետ ժողովրդին անաչառ ատեանը ներկայացունել:

1874 հոկ. 31
ի Կ. Պոլիս:

Որով մնամ ձեզ
շնորհապարտ
Մ. Փորթուգալեան:

«Կործանում Հայոց Հոգևոր Ճեմարանի» վերնագրով „Спб. Вѣд, լրագրի №314ի մէջ կար մի նամակ, ուղղած Սր. Էջմիածնից: Պատմելով ամբողջ պատմութիւնը, թէ ինչպէս շինուեցաւ այն հոյակապ շինութիւնը եւ կրակի անգութ հարուածից կործանուեցաւ. նա, յօդուածագիրը ասում է, թէ այս դժբաղդութիւնը միատեսակ ծանր կը լինի ամենայն Հայի համար թէ Դօնի, Վօլգայի, Թէրքի, Կուրի, Կասպեան եւ Սեւ ծովերի ափերի մօտ եւ թէ Տիգրիսի, Եփրատի, Նեղոսի եւ Գանգէսի մօտ: Կործանման սարսափելի տեսարանը նոյնպէս խորին տպաւորութիւն է գործել Նորին Օծութեան վերայ:

Ցաւում ենք, վերջացնում է յօդուածագիրը, որ Հայերը իւրեանց նուիրատուութեամբը կ'նպաստեն Հովուապետին ճեմարանի նորոգման մէջ, ինչպէս որ միշտ նշանաւոր են նոքա իւրեանց գովելի առատաձեռնութեամբ լուսաւորութեան գործում:

—

Գ. Սուք-Սէրը Աստրախանից մեզ հաղորդում է, որ նոյեմբերի 5-ին կատարուեցաւ ընտրութիւնը և 14 ին հաստատուեցաւ հոգաբարձութիւնը Աստրախանայ Հայազգի աղքատների վերայ, որ Բարձրագոյն հաստատուած էր այս տարուայ յուլիսի 12-ին:

Համաձայն ընդհանուր ժողովոյ ընտրութեան և վիճակաւոր Առաջնորդի հաստատութեանը ընտրուեցան. Մկրտիչ Բուրջալեանց, Խաչատուր Դադաշեանց եւ Յովհաննէս Համազասպեանց, իբրեւ եկեղեցական երեցփոխաններ, անդամ եղան հոգաբարձութեան Աստուածատուր Իվազեանց եւ Խաչատուր Սարդսեանց և վիճակաւոր Առաջնորդի կողմից նշանակուեցաւ Աւագ քահանայ Յովսէփ Բունիաթեանց:

Աստրախանի հասարակութիւնը իւր աղքատների նիւթական ու բարոյական հոգատարութեան սրբազան գործը փառահարար յանձնելով վերոյիշեալ անձանց, լիայոյս է, որ նոքա ճշմարտապէս արդարացնելու են իւրեանց վերայ հասարակութեան վստահութիւնը, նոցա ջերմեռանդ գործունէութեամբ լրացուցանելն իւրեանց սուրբ պարտականութիւնը պատիւ վաստակելու է իւրեանց անուններին, և ցուցանելու է հասարակութեանը, որ նա բնաւ սխալված չէր իւր ընտրութեան մէջ:

—

Մոսկուում կարդում ենք...

Գոհունակութեամբ կիմանանք թէ կեդրոնական սնտուկին 4000 լիրայի չափ պարտքը հատուցանելու համար վսեմ. Աբրահամ փաշայի եւ վսեմ. Սարգիս պէյի կողմէ խոստացուած վեհանձնական առատաձեռնութեան շնորհն այս օրերս իրագործուած է, Քաղ. ժողովոյ ատենապետ վսեմ. Սիմոն պէյի ձեռօք, հետեւաբար, Պատրիարքարանի մէջ յատուկ ժամանաժողով մը կազմուելով պարտատէրները պիտի հրաւիրուին եւ իւրաքանչիւրին իրաւունքն իրեն հատուցուի:

ՆԵՐՔԻՆ

ԱԳՈՒԼԻՍ

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի:)

—

Վերին—Ագուլիսը կարելի է անուանել մի գիւղաքաղաք. դա գտնվում է Արարատեան աշխարհի Գողթան գաւառում: Մենք դորան անուանում ենք «գիւղաքաղաք», որովհետև դա ինչպէս մի գիւղ է, որ իւր բնակիչների շնորհիւ ներքնապէս ստանում է քաղաքի կերպարանք.

իմ տալիկ տօվիկ, դուշմնի աճկիցը քոռացնող տղերքն ինչ դէթ արին, գէնացվալէթ:

—Տօ, դուն չէիր, վուր ինձ վրայ ծախեցիր տունըդ, ասա էլի թէ դուն չէիր, վուր էս ջոմարդ խալխումը քիզ խայտառակիմ, կավում էին երկու մարդ այնտեղ կանգնած ու տընդղում զրուածքը:

—Աստուծ, երդինք, գերդինք, ծախեցի:

—Բաս ինչի ին քու անումը գրի... դուն կը բղէիր...... ինչ է, չկափլաւ սպիտէին բաժնի, վուր էտէնց ջանդ քու անումը դզել տուիր...

—Չէ, ախպէր, ես վունչինչ խաբարութին չունիմ իրանք իրանք ին գրի, Քիգվարդը գիգինայ, զուրթ իմ ասում, թէ դուզ Աւետարանի վրայ օրթում կուտիմ, մի չարանայ...

—Հայ թէ իս պրծայ զաւիղարաբէմէն ու Մաթուշն ինձ իրա ժամանակ իմաց տուից իմ շորափը, ասում էր Թաթարխանովի պէս մէկ բաղդաւոր մարդ, ուրախ ուրախ դուրս գալով այն տեղից:

Մէկ մարդ բաւականի ժամանակ զրուածքը քըքրէլուց և թերթելուց յետ, հեռացաւ այն տեղից բացագանչելով:

—Վայ էն օրին, վուր մէր օրչխաոի զուրձիրը Մաթուշին ին պահ տվի, ջիլաւը նրա ձեռն ին ասի մէր գլխին կակալ կոտրելու. փառք քիզ Սանգծող, աշխարհքի քանդվելուն թամաշա արա......

—

Եկաւ, հասաւ երանելի ժամանակը: Նոյն քաղաքի բնակիչները մի կտոր թուղթ ձեռին վազվըզ ման էին գալիս քաղաքի մէջ ու ամեն մէկին խնդրում հասկացնել նրանց էն թղթի մէջ գրածի միտքը:

—Ախար, վուր մէկին գրիմ, դանդատւում էր ալափ Սիմօնը...... Աղա Ցարութիւնը ասըպիլ էր թէ փլան փլան մարդկերանց գրէ մէջը՝ ամա մէր հարեան Արզարը գլուխը մէր է քաշի ու բղաւում, թէ մի գրի դրանց, էտի ղալթաղանդութին կայ, գրէ կօսէ, էս, էս ու էս մարդկերանցը. մախլաս գաւի դարաբայ է, վուր մէր անգիտում մարդկերանց գլխին է գալիս......

—Հա, տղէրք, չըլիմ չիմանամ... վունցոր մինձ աղէն է հրամայի, էնէնց ժամ էկէք ու ձեզ այդնած աղերու անումը ասէք, թէ չէ հեսա մարդ կու կանդնեցնին ձէր գլխին, վուր էս հիմիկուայ քեաստութենին մէ էնդադամ էլի կու աւելնայ ու մէկ էլ, կօսէ, էն նուր մօղնի էկածները, կօսէ, դուզն էս մէր հին քաղաքը քարուքանդ անին ու ձիզ Մախաթի ծէրը քշի...

Այսպէս և սորա նման խորհուրդներ էին տալիս քաղաքի բնակիչներին մէկ երկու շաբաթուայ մէջ տեսակ տեսակ աղաներից դըրված մարդիկ:

Բայց բնակիչները շատ հանդարտ և սառը կերպիւ ձայնակից էին լինում այդ չարալիզու մարդկերանց և ինչպէս վայել է ծանր և կըշռադատող խելքին, էնպէս էին ժամ գալիս:

Այդպէս չէին վարվում աւելի բարձր դասի մարդիկ: Նոցա այդ տեսակ բաներն աւելի սըրտին էին դիպչում քան խելքին...... աղաների զլած ու կարգած մեքենաների դէմ, իրանց մեքենաներն էին սարքում, բզաւում, խօսում ու նրանց բանիրը աշխարհքը դցում...

—Օպպօզիցիա, օպպօզիցիա, կանչում էր մէկը:

—Չէ, [illegible], կանչում էր միւսը:

—Չի լինի էդ երկու մաչինէն միացնենք միասին, խորհուրդ է տալիս մի ուրիշը:

—Բայց դրանից ոչ մէկը էլ չէր հարկաւոր. որովհետև սոսինձով կպցրած մաշինէն ինքն իրան սկսեց մէկ մէկ պլօկուել, երբ դրան կամեցան բանի գործ դնել:

—Վա՜յ... հառաչեց մաշինիստ Մաթուշը...

—Վա՜յ... ձայն տուեց ծերօ կոյնող Մարգարը:

—Վա՜յ վա՜յ, ասացին դրանց համքրի մարդիկ:

—Մենք կորանք, գնացինք, դրանց հետ բըզաւեցին միւս աղա մարդիկ......

—

Աշնան սաք օր էր...... Մէկ սան առաջ կանդնած էին նոր երիտասարդներ......

—Հը... հարցնում էին մարդիկ ամեն մէկ դուրս եկողին...

—Սլայըրն... պատասխանում էին...

—Քանի սեւ կէնձի ստացաք, հարցնում էին կրկին:

—Մախլաս ստացայ, ամա սաս կէնձերն ինձ լաւ յայտնի է, թէ ովքեր էին դցում...

—Մի վախենայ, դրանով էլ չին հասնի իրանց մուրազին, մխիթարում էին սլացրած երիտասարդներին, տեսնենք թէ մէկէլ թաղը միզ համա ինչ կօսէ......

—Խա, խա, խա, ծիծաղում էին էն թաղի մարդիկ, երբ նորերին սլայըրին ու իրանց համքրի մարդկանց անց կայըրին... վունց էր...

—Լաւ էր, լաւ, բաչխաղօնիմ, ասում էր Թախթախ ուստաղինց Մարգարը, իւր ժամացույցի սակեայ շղթան տրաբելով...

—Թող հիմի հասկանան մեր ումն ու մեր չառպանդ Մաթուշի սարքած մաշինի հանգը, բոլս ձայնով ասում էր Թաթարխանինց Ղազարը, իր լեզուն բերնը ոլորելով:

—Փա՛, փա՛, փա՛, փլթփլթում էր Աղջօթունինց Արշէմը, իր չուխի երկէն թեւը խաղացնելով......

—Վա՛խ, վա՛խ, վա՛խաք, սրտին եղ քսելով ասում էր Մարքարն ու գլխը քէչ ծածկում:

—Մաթուշ, էն մէկէլ թաղը վունց է, հարցնում էին աւելի ծանր ու հեռատես մարդիկ...

—Մարդիկ ունիմ ղրկած, ամեն տեղ ասած ունիմ մեր հանդի ժամ գալու......

—Մենք վուր էստի ինք, էլ ինչպէս կանան մեր դէմ բան սարքին, ասում էր հաստավիզ Սարքիսը, իր հաստ փորը կարճ պալտօյում փաթաթելով:

Իսկ նոր երիտասարդները սլացած հեռանում էին այնտեղից իւրեանց մխիթարելով և իւրեանց յոյսը միւս թաղի բնակիչների վերայ դնելով:

—Մեր Գասպարը իրա կամպանիով մէջն է մտի էլի, Մաթուշ ջան, սիրտը չփիթուած ասում էր Թախթախ ուստաղինց Մարգարը......

—Վունց, վունց:...... վայ քու տլիս տղայ:

—Միջին թաղը նրան ու մեկէլներուն անց է կայըրի...

—Վա՛յ քու տլիս տղայ, վունց խաբուեցանք...... գնաց, կորաւ իմ ամաղը......

Մաթուշի նեղութիւնն իզուր չէր: Մէկէլ թաղի բնակիչները ոչ թէ սլացրին նոր երիտասարդներին, այլ ինչպէս էլ վայել էր նոցա հաստատամտութեանը աշխատեցին իւրեանց փոխարէն այնպիսի մարդկերանց անցկացնել, որոնք նրանց օգուտը լաւ էին ճանաչում ու կարեկից էին նրանց դրութեանը:

—Վա՛յ, հառաչից մաշինիստ սարքող համքարը, վա՛յ...

—Էս էր իմ վերջը, հա՛, բղաւում էր Մաթուշը... էս ինչ դժուարին էկաւ գլխիս, վուր իս էսէնց խայտառակվեցի, հարիրաւոր մարդկերանց ինձ դուշման չինեցի ու ամենի առաջ իս վաթ մարդ դուս էկայ... Արի ու հիմի էլ ցխեմէն հանի... Դուն իս միղաւոր Մարքար..

—Վա՛յ, իս ինչ անիմ...

—Վայ ու ջան, դուն ինչի էիր խառնվում.

—Քիզ ասիս...... քու ինչ բանն էր մաշինա սարքիլը......

—Գնացէք ռադ էլէք, ասում էր Թաթարխանովը, ձեզ հորէսիդէնն էլ վունչինչ բանումը չիմ խառնի, բանի պէտք չէք......

Գործողութիւնը վերջացաւ: Ո՞վ էր մեղաւորը, թող իրանք վճռեն......

Բաղքցի

բայց դառնալ, գէթ մի աննշան, քաղաք — այդ Ագուլիսի համար շատ դժուարին է։ Նրա պատճառը գլխաւորապէս իւր անյարմար դիրքն է. շրջապատուած բարձրագիր սարերով և նստած ձորերի մէջ, ընդ՝ ամին և ոչինչ հաղորդակցութիւն չունենալով միւս քաղաքների հետ, նա երբէք չէ մտածում փոխել իւր վիճակը. նա մի անկիւնում ընկած ապրում է իւր համար։

Ագուլիսի կլիման բարեխառն է. Թեթեւ թեթեւամբ մարդ ներշնչում է սառն մեղմաթաթոր օդը։ Վիրի—գետ անունով գետակը անցնում է գիւղամիջով, բաժանելով մի քանի ճիւղեր։ Ցածն և վեց վճիտ աղբիւրներ նուիրում են Ագուլիսի բնակիչներին իւրեանց քաղցրահամ ջուրը. գրեթէ ամեն փողոցում կարելի է հանդիպել մի խոխոջող առուակի։ Մի երկար ձորի միջով Ագուլիսը ձգւում է հիւսիսից դէպի հարաւ ինչպէս մի կանաչազարդ այգի; ճակատը ուղղած ունենալով դէպի Նրասխ գետը և մեկողմեցնայելով դէպի մի բարձրագիր սար «կամք քո է» անունով։ Այս սարի մասին աւանդութեամբ պատմում են, թէ ջրհեղեղի ժամանակ Նոյ նահապետը այդ տեղ հարցրել է իւր կնոջը, թէ նա կը ցանկա՞ր արդեօք իջնել այդ սարի վերայ։ Կինը պատասխանել է, «կամք քո է», իսկ տապանը լողացել է դէպի Մասիս։ Գիւղը շրջապատուած է այգիներով։ Բուսականութիւնը այստեղ իւր ամենազնիւ տեսակումն է։ Ամենախոշոր խաղողը, տանձը, խնձորը, դեղձը և միւս հաղուագիւտ մրգեղէնները այստեղ բոլորովին չնչին գնով լցնում են ձեր թաշկինակները և պարկերը։—Մօտ 400 տուն Հայ և 150 տուն Թաթարներ բնակւում են Ագուլիսում։ Ունի 10 եկեղեցիներ և մի հոյակապ վանք սուրբ Թովմայի անունով։ Այդ եկեղեցիներից հնգի մէջ ամբողջ տարին լուսաւորութիւն է տրւում, միւսներում ժամերգութիւն է լինում։ Ինչպէս լսեցի մի պառաւից, երբեմն հասարակութիւնը կամեցած էր այցելել միայն երկու եկեղեցիները, այսինքն հասարակութեան կէսը գնար վնասկից դէպի ձախ դասուած Ս. Քրիստափորի հոյակապ եկեղեցին (ուր առաջարար լինում է կանոնաւոր ժամերգութիւն), իսկ միւսը—դէպի աջ՝ Ս. Շմաւոնի եկեղեցին։ Այնժամ այն ժամանակ այդ եկեղեցիները լի կը լինէին ժողովրդով, և իւրաքանչիւրը երկու քահանայով և ուսումնարանի քանի մի երգեցիկ աշակերտներով ամենայն օր կը լինէր կենդանութեան մէջ, և ժողովուրդը բոլորովին բաւական և մխիթարուած սրտով դուրս կը գնար եկեղեցուց։ Բայց Ս. Քրիստափորին միւս բոլոր եկեղեցիները դատապարտուած են հնութեան չորեքումն։ Նոցա ներքինը վկայում է գարմուր ժամանակ և պատնողէս հարուածներ։ Ցախուրին պարսկի ձեռքը նոյն Պարսկաճաշակ պատկերների նկարչութեան վերայ՝ յիշեցնում է անծանօթ այցելուին ազգային պատմութեան թշուառ անցեալը։

Ու մի տուն չէ զրկուած այգից, ամեն տուն շրջապատուած է դրախտով։ Տները առաջին կողմից ամենեւին անպաճոյճ են, միայն յանախ պատերն են երեւում, ինչպէս Նախիջեւանում և Երևանում—իսկ ներքինը բոլորովին եւրոպական ճաշակով շինած և զարդարուած է։ Ունի մէկ բազար, որ երկու կողմից երկարաձգւում է մէկ բարձրաւանդակի վերայ մօտ 60 խանութներով, որոնց մէջ գրեթէ կարելի է ամեն բան գտնել, նաև առաւել, քան թէ կը պահանջւէր մի գիւղաքաղաքից։

Ագուլիսի բնակիչները ամենքն էլ պարապում են վաճառականութեամբ, նոցանից վերջինն անգամ իւր ոտի տակն է տանել արտասահման և Ռուսաստանը։ Մանաւանդ շատ պարապում են բամբակի և մետաքսի վաճառքով, այլ և այգեգործութեամբ։ Այս աշխատասէր և ժիր ժողովուրդը իւր վաճառքը գնում է Երևանից, Նուխիից և Շուշից գլխաւորապէս, և տանում է Եւրոպայի վաճառանոց քաղաքները, մեծ մասով — Ֆրանսիա և Ռուսաստան։ Հինգ, կամ լաւ ասել, երեք տարի առաջ Ագուլիսը բաւական մեծ յաջողութիւնով առաջ էր գնում վաճառականութեան ասպարիզում, իսկ այսօր նա այդ կողմանէ գտնւում է աննախանձելի դրութեան մէջ, ժողովրդի մեծ մասը բեկուած սրտով է նայում վաճառականութեան վերայ։ Այսպէս ահա անանկութիւնը ստորացրել է շատերին իւրեանց բարձրութիւնից, նոքա՝ որոնք երբեմն ժողովրդի բարձր դասակարգին էին պատկանում, այժմ մտած են ստորին դասակարգը։

Բնակիչների մեծ — մասը հարուստ ժողովուրդն է հիւրասէր։ Կանանց մի փոքր մասը գլուխ է կապում Վրաստանի ճաշակով, իսկ մեծ մասը—ինչպէս վայել է Հայաստանի որդուն. Վերջինները իւրեանց ամուսնուն անգամ չեն երեւում արտաքուստ, իսկ առաջինները ոչ միայն երեւում են այլ և խօսում, զրուցում։ Այսանց հասարակութեան մեծ մասը ճաշում է նախնական սովորութիւնով յատակի վերայ ծալապատիկ նստած. մի փոքր մասը միայն եւրոպական ձեւով՝ շուրջանակի սեղանի շուրջ, և այս, եթէ չեմ սխալւում, այն ժամանակ միայն, երբ հիւրընկալութիւն ունին։

Յ. Նազարեանց.

Շաբաթ, ամսոյս 23-ին Կլուբում երրորդ կարգի ընտրողների նիստն էր։ Երկու հազարից աւելի ընտրողներից ներկայ էին միայն 350-հոգի։ Ընտրուեցան՝

Շաղինեանց Գևո. 270 ձայնով, Վարդանեանց Յար. 265 ձ., Փուղինեանց Գ. 259 ձ., Բաբամեանց Աբր. 258 ձ., Միրիմանեանց Սող. 256 ձ., Ծովեանեանց Գ. 254 ձ., Իշխ. Բէհբութեանց Լ. 253 ձ., Ծովիանեանց Իս. 252 ձ., Իշխ. Սումբաթով Գաս. 252 ձ., Փիլոսյեանց Նիկ. 249 ձ., Ռօտինեանց Գ. 245 ձ., Շաղինեանց Յով. 241 ձ., Ծովեանեանց Աղ. 243 ձ., Ռօտինեանց Մար. 242 ձ., Փարսկով Յով. 242., Ցինամզղվարով Իվ. 241 ձ., Փարսկով Խա. 209 ձ., Հիզմբեանց Հէք. 237 ձ., Ծուբինեանց Մով. 237 ձ., Ալամդարեանց Յով. 236 ձ., Պապինեանց Գ. 235 ձ., [illegible] 235 ձ., Ծարինեանց Յար. 234 ձ. և Տէր-Յովսէփեանց Յով. 229 ձ. —

Սորանով վերջացան այսպէս քաղաքային վարչութեան 72 խրատասու անդամոց ընտրութիւնները։

— Վաղը Կիւրակէ Նորընտիր խրատասու 72 անձինք, լսածնիս նայելով, պէտք է երդուեն։

Կ. Պօլսում լոյս է տեսել՝՝ Գործնական Քերականութիւն՝ յօրինել է Ա. Ա. Սուրէնեան։ գինն է մէկ ու կէս փրանք։

Պ. Սար-Սէբը Ածգարխանից մեզ հաղորդում է հետեւեալ լուրեր.

—Ծովային նաւագնացութիւնը վերջացաւ. իսկ Վոլգայինը վերջանում է շուտով, Սարատովում և Ցարիցինում երեւում են սառուցները։

—Այս տարի Դղլարի ցքին մեծ առեւտուր ունեցաւ Աժդարխանում, մինչև այժմ նա չատ անծանօթ էր, իւր պակասութեանց համար։ Այժմ չողու միջոցով դուրս կը գայ կարծածութեան յարմար և մաքուր, այնպէս որ կը խափանէ Ռուսաստանի հացի ցքու առեւտուրը։ Այս տարի վաճառուեցաւ $8^{1}/_{4}$—$8^{1}/_{2}$ կոպէկով մի սափրանը։

—Ընդհանուր գինուորական ընտրութիւնը սկսուեցաւ Ածգարխանում և չարունակւում է։

—Ցեղական Թատրոնի խաղարկութիւնքն այս ձմեռն չատ անմխիթարական են։ Ցեղական կլուբի մէջ լինում են դիմակահանդէսներ և քնարածական կոնցերտներ։

«Голосъ» լրագիրը լսել է, որ չուտով ակտական խորհրդարանի քննութեան կը ներկայացնուի բանտերի նոր կազմակերպութեան նախագիծը, որ մշակուել է մի յանձնաժողովում պետական խորհրդարանի անդամ Զուբօվի նախագահութեամբ։

«Мос. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ վճռած է արդէն քաղաքական պաշտօնատարներին Թոյլ տալ բեխեր եւ մօրուք ունենալ. այս իրաւունքից միայն ազատ են պալատականները, Պետական խորհրդարանի անդամները, Ծերակոյտի անդամները Սենատ-սեկրետարները և մի քանի հաստատութեանց մէջ ծառայողները։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ

— Փարիզ. Rappel լրագրում ծայրայեղ հանրապետական Լուի Բլանը առաջարկեց մի նամակ ազգային ժողովի ապագայ գործունէութեան առթիւ։ Լուի Բլանի կարծիքով հանրապետութիւնը հիմնուած գոլով բնական իրաւանց վերայ, կարօտ չէ ում և իցէ կողմից հրատարակման կամ հաստատութեան։ Հարկաւոր է միայն կազմակերպել հանրապետութիւնը և ոչ թէ ընդունել նորան։ Բայց ի մտի ունենալով, որ ներկայ ժողովի բազմութիւնը միապետական է, ուստի անզօր է կազմելու հանրապետական սահմանադրութիւն, Լուի Բլանը առաջարկում է դիմել ազգին, որ կը յայտնէ իւր կարծիքը նոր ընտրութիւններով։ Այս նամակին Ալէքս Կրիստոֆը, որ ձախակողմեան կենդրոնի ամենանշանաւոր անդամներից մինն է, պատասխանեց Opinion Nationale լրագրում։ Կրիստոֆի կարծիքով ոչ մի ձև կառավարութեան, է այդ հանրապետութիւն, է այդ միապետութիւն, չի կարող գոյութիւն ունենալ բնական իրաւանց հիման վերայ։ Ժողովուրդը ունի իրաւունք իւրեան յարմար ձեւով կառավարելու մի որոշ ժամանակ, նորան արգելք չը պէտք է լինի ոչոք։ Այդ պատճառով Կրիստոֆը ցանկանում է, որ հանրապետութիւնը հիմնուած լինի ոչ թէ բնական իրաւանց, այլ գրական օրինաց վերայ։ Ազգին դիմելու առաջարկութեան դէմ Կրիստոֆը բողոքում է ասելով, թէ դորանից կը շահվին միայն Բոնապարտեանները։ Ըստ որ Կրիստոֆի կարծիքով ձախակողմեան կենդրոնը չը պէտք է նպաստէ ազգային ժողովի լուծմանը, այլ աշխատի Մակ Մահոնի իշխանութիւնը կազմակերպել, հանրապետական ուղղութիւն տալով նորան։

—Կրիստոֆի այս նամակի առթիւ Français [illegible] կողմեան կենդրոնը չէ համակիր Կրիստոֆի կարծեաց, այլ ընդհակառակը է աջակողմեան միջակ կուսակցութեան հետ, այն է՝ նպաստելու է միապետութեան հաստատելուն և ոչ հանրապետութեան։

—Քաղաքային վարչութեանց անդամոց ընտրութիւնները քաղաքներում յաջող էին հանրապետութեան, իսկ գիւղերում՝ միապետութեան։

—Figaro լրագրի խօսքերով ներկայ կառավարութեան օրով արգելուած են 28 լրագիր, որոնցից 27 հանրապետական են, իսկ մինը Բօնապարտեան, դադարեցրած են 20 լրագիր — 16 ը հանրապետական, 3 ը օրինական և մինը Բոնապարտեան արգելուած է հատով ծախելու 165 լրագիր — 161 հանրապետական, 2 օրինական և 2 Բոնապարտեան։ Կառավարութիւնը այսքան հանրապետական լրագրաց դատապարտելուց յետոյ դարձեալ յայտնում է, թէ երբէք մամուլը չէ վայելել այնքան ազատութիւն, որքան այժմ։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Հիւսիսային Ամերիկայումը ներկայումս կայ 164,815 հասարակական և մասնաւոր գրադարաններ, որ ունին 45,528,938 հատոր գիրք։ Դոցանից 38,000 գրադարան 10 միլլիոն հատոր գրքերով պատկանում է կիրակեան և կրօնական ուսումնարաններին։

Նիւ-Եօրկումը ապագրուել է մի չարագրութիւն երկու հատորից բաղկացած հետեւեալ վերնագրով «Դիւական գրադարան, որ պարունակում է իւր մէջ ամենայն գրուածքներ ժողովածու, ոգիների, նոցա ծագման և ազդեցութեան վերայ՝ սատանի, այսերի դժոխքի, նոցա չարչարանքների, փրկութեան վերայ և այլն։

Հոկտեմբերին Լայպցիգում տօնեցին երեւելի Փիլոլոգ պրոֆեսոր Կարլ Լեբրեխտի 50 ամեայ տարեդարձը։ Նորա առաջուայ ուսանողները, որոնք պատկանում են զանազան ազգայնութեանց, նուիրեցին նորան մի չքեղ զարդարած ֆլյասակարան 100 պատկերներով, նոյնպէս նորա մարմարեայ արձանը և մի հատոր գիրք, որ պարունակում է իւր մէջ 16 բոլորովին նոր յօդուածներ փիլոլոգիքական հարցերի վերաբերեալ, որ գրած են յատուկ յոբելեանի առթիւ։

փարիզից «Les Mondes» գիտնական օրագիրը հաղորդում է, որ Պալերմոյի մօտ ոչ հեռի Սան-Մարտինօյից գտել են հնդուկ ծծմրի չիրթ, որ հասում է լեռան ճեղքից և տալիս է օրենը մօտ 500 կիլոնալ ծծում։

Ներկայումս Նիւ-Եօրկեան Թատրոնում մեծ յաջողութիւն է գտնում «Ջրհեղեղ կամ դրախտ կորուսեալ» պիեսան։ Գործողութեան սկիզբը կատարւում է Եդեմում, իսկ վերջինը Նոյի տապանում։ Դորա մէջ բաւական մանրամասնաբար պատմւում է Ջրհեղեղի, Աբէլի սպանման և միւս անցքերի մասին։ Ամենից ծիծաղելին այն է, որ վերջին գործողութեան մէջ կայենի որդիքը բալետ են պարում։

Լսում ենք, որ հողաբարձու մի խորհրդարանում առաջարկում է ժամանակաւ երկրաչափի փոխարէն հրաւիրել Ներսիսեան դպրոցի գետինը չափելու մի ուսմնագիր (կոմպաս)։ Երեւ մասածում է մեծ. պարոնը, եթէ ինքը կարող է հողաբարձու լինել բոլ ուսումնական և դաստիարակական մասին, ինչու կոմպասը երկրաչափ չէ կարող լինել. եղուց էլ հայերեն ու կոշկակարը տեսուչ կամ ուսուցիչ. չատ իրաւացի է պ. մեծ. հողաբարձուի դատողութիւնն իւր չափով։

Վեհ. Սուլթանն իւր անձնական գանձէն 20000 լիրա շնորհեց ի նպաստ Փոքր-Ասիոյ սովատանջ ժողովրդոց։

Միանգամայն իւր գինակիրներին եօժէր պէյը Փոքր-Ասիա ղրկեց որպէս զի տակեսլ երկիրները պտտելով՝ ժողովրդոց վիճակը լաւ հասկանայ և մանրամասն տեղեկագիր բերէ Ն. Վեհափառութեանն։

Մասիսում կարդում ենք,

Հինգշաբաթի իրիկուան Լեվանթ Հերալի մէջ հետեւեալ տողերը կը կարդա՞նք։

«Ցանկալով վկայանալ թէ Ընկերիւն չըջականերն [illegible] ձրն ինկեր և Եօզղատեն Կեսարիա հեռագրական հաղորդակցութիւններն ընդմիջեր են։ Օղին այս կանխահաս խստութիւնը սարսափելի կերպիւ կը ծանրացնէ սովատանջ ժողովրդոց վիճակը։ Կեսարիայէն Նոյեմբերի 9 (լատ.) Թուով նամակ մը կը ծանուցանէ, թէ օգնութեանց մասնաժողովին գործակատարներն ամեն օր հաւասար չափով հաց կը բաժնեն Թուրքաց, Հայոց և Յունաց։ Նոյ. 11 Թըւով ուրիշ նամակ մ' ալ կը հաստատէ թէ կառավարութիւնը Կեսարիոյ մէջ օգնութեան գրութիւն մը հաստատած չէ։

Անցեալները Մարաշի կողմէն երկու քույր Թրքուհիք եկած էին Կ. Պօլիս, Աքճէ և Իմինէ, երկուքն ալ մօրուաւոր։

Ցերեկ կանայք անցեալ ուրբաթ օրը Վեհ. Սուլթանին ակերատիր տուին մզկիթին եկած միջոցին. Նորին Վեհափառութիւնն ալ ամսական 250 ական զրչ կապեց անոնց։ Ցեռող երկու մօրուաւոր քոյրերը Բարձր. Մայր Թագուհւոյն աարուելով պարգևներ ստացան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հայոց մէջ նկատւում են ամուսնութեան վերաբերութեամբ երկու ծայրայեղութիւններ։ Գիւղացիք և փոքր քաղաքների բնակիչ թէ օրիորդներն և թէ երիտասարդներն ամուսնանում են շատ վաղ։ Ծնողքը գիւղերում տասն և չորս տարեկան աղջիկ երեխայից ջանք են թափում մարդու տալ, այդ պատճառաւ դուք շատ կը հանդիպէք ստորին դասի մէջ տասն և վեց տարեկան մայրեր, և տասն եօթ և տասն ութ տարեկան հայրեր։ Փոքր քաղաքներում փոքր ինչ տարբերութիւններով հասակի հանդիպում ենք միեւնոյն սովորութեան։ Մեծ Հայաբնակ քաղաքներում նկատւում է դորան հակառակ երեւոյթ։ Երիտասարդները կարծես զիտմամբ հեռացնում են իւրեանցից ամուսնութեան օրն և հարցը, և դորա հետ կապ ունեցող օրիորդների ամուսնութեան հարցը օրէց օր դժուարանում է և հեռանում է իւր բնական կատարման վայրկենից։

Այդ երկու միմիանց հակառակ սովորութիւնն և հայեացքը ամուսնութեան հարցի վերաբերութեամբ Հայոց զանազան դասերի մէջ մէկութիւն է պահանջում, մեր կարծիքով, բայց տեղական պայմանների միջոցով, որ ընթերցողին ծանօթ են, և ընդհանուր տեսական հայեացքով, նմանապէս պատմական փաստերի համեմատութիւնով, ուսումնասիրելով օտար ազգերի կեանքը միեւնոյն նիւթի վերաբերութեամբ։

Գիտնականների վիճակագրական հետազօտութիւններով Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի, և Եւրոպայի ստորին ժողովրդի կեանքից ակներեւ երեւում է, որ վերոյիշեալ երկու ծայրայեղութիւնը նկատւում է և այդ աշխարհների մէջ։ Առհասարակ գիտնականները հաւատացնում են, որ Արեւելեան զանազան ցեղերի մէջ սովորական հասակներ ամուսնութեան համար, օրիորդներին որոշած է 10, 12, 15, 17, մինչև 18 տարին, այսինքն տասից մինչև տասն և ութը։ Վերջին թիւն է ամենաբարձրը և այդ հասակումը ամուսնացող օրիորդների թիւը համեմատաբար շատ փոքր է լինում։ Իսկ ժողովրդի բարձր դասակարգումը ինչպէս քննել է գիտնական Վապպէուսը հետեւեալ թուանշաններն են երեւում ամուսնութեան միջակ ժամանակամիջոցի համար։

ՏԱՐԻՔ.

	Երիտաս.	Օրիորդներ.
Անգլիայում ...	25,94	24,69 տարի
Ֆրանսիայումը..	28,41	25,32
Նորվէգիայումը	28,51	26,98
Նիդերլանդումը	29,15	27,78
Բէլգիայումը ...	29,94	28,19

Հարկաւոր է սորան աւելացնել, որ քըսան տարեկանների ամուսնութիւնը Եւրոպայումը համարւում է վաղաժամ, որովհետեւ այդ հասակումը ամուսնութիւնը դարձեալ չէ համապատասխանում իւր բնական պայմաններին։

Ֆիզիօլոգիական հետազօտութիւններից երեւում է, որ կնոջ մարմնոյ կազմակերպութիւնը կատարելապէս զարգացման շրջանին հասնում է միայն այն ժամանակ, երբ կատարելապէս զարգանում են նորա զաւակային ոսկրները, որովհետեւ այդ ոսկրի զարգացումից է կախուած ծննդեան բնականութիւնը, հեշտութիւնն և նորա բարեբախտ հետեւանքը ծննդականի առողջութեան համար։ Վաղաժամ ծննդականութիւնը, երբ կինարմարմնի մարմինը և ծննդեան արգանդը բնականապէս զարգացած չեն, ունենում է բազմաթիւ անմխիթար հետեւանքներ, ինչպէս ծննդականի համար, նմանապէս և ծնեալի համար։ Իսկ ծննդեան այդ բնական և հարկաւոր պայմանների, այսինքն կանանց մարմնոյ ամբողջապէս և վերջնական զարգացումն տեղի է ունենում բատ միեւնոյն հետազօտութեան քսան և մէկ տարեկան հասակում։ Այդ պատճառաւ, ինչպէս երեւում է Վապպէուսի վերոգրեալ աղիւսակից, բարձր կարգի ժողովրդոց մէջ, որին պէտք է վերաբերել կրթեալ և ուսեալ մասը ժողովրդոց, օրիորդների ամուսնութեան միջին հասակը քսան և մէկ տարիից փոքր չէ։ Յայտնի բան է, որ ժողովրդի ստորին դասի մէջ այդ մտածողութիւնը ամուսնութեան հարցի մէջ տեղիք և աժէք չէ ստանում։ Մշակին հարկաւոր է ֆիզիքական ոյժ, նիւթական օգնականութիւն, մի վաստակող օգնական, իբրեւ մշակ և հարազատ ընկեր, առանց որոյ ամուսնացութեան իւր կեանքը բաղդի և տարաբաղդութեան մէջ նա, մշակը, ոչ ամփոփ է կարծում։ Այդ անտեսական բնութիւն ունեցող պատճառին աւելանում է մի այլ ոչ սակաւ գօըեղ բարոյական պատճառ, որ զրկում է ստորին ժողովրդին դէպի վաղաժամ ամուսնութիւն, — այն է նահապետական հայեացքը, որ ամօթ, պակասութիւն և պարսաւանք է համարում եթէ որևիցէ օրիորդ երկար ժամանակ, զկնի նորա զարգացման նշաններն երևան գալուց, մարդու չէ գնում: Ծնողաց գործնական մասնակցութիւնը ամուսնութեան մէջ, առանց ամուսինների զրական համաձայնութեան վերջացնում է հարցը: Հետաքրքրելի է, որ այդ երևոյթը համանման ձևերով կըրկնվում է ամենայն աշխարհների, գաւառութեանց և ազգերի ժողովրդոց ստորին դասերի մէջ: Այդ ծայրայեղութիւնը, ինչպէս ասացինք պատահում է և մեր Հայոց մէջ:

Վիճակագրական թուանշանների համեմատութիւններից երևում է, որ մահը սաստկանում է և համեմատաբար յաճախ է երիտասարդների մէջ, որոնք չեն ամուսնանում, կամ ամուսնանում են անժամանակ, խելագարների ամենամեծ թիւը վերաբերւում է չամուսնացողներին, բարոյական և ֆիզիքական զօրութիւնների պակասութիւնն և անպտղաւութիւնն երիտասարդների մէջ յառաջանում է չամուսնութիւնից, ցեղի կորուստը, յայտնի բան է — հետևանք է չամուսնութեան, բազմաթիւ հիւանդութիւնները, որոնք գըլխաւորապէս պատահում են երիտասարդների մէջ, ծագում են անժամանակ ամուսնութիւնից կամ չամուսնութիւնից: Թէ բարոյական մտաւորական և թէ ֆիզիքական ընդունակութիւնների անբաւական զարգացումն դարձեալ կախումն է ստանում անժամանակ ամուսնութիւնից: Այսպիսի կերպիւ ամուսնութեան բնական ժամանակը մեքենայօրէն չափազանց հեռացնելն կամ մերձաւորացնելն ազդում է անհատի յատկութիւնների վերայ և այդ ճանապարհներով ընթանալով դառնում է մի անբուժելի հասարակական ախտ և վնասակար երևոյթ:

Ասածներիս հարկաւոր է աւելացնել մի այլ բնաւորութիւն, բայց դարձեալ մեծ հասարակական ախտ պիտի համարվի իւր հետևանքներով թէ ընտանեկան և թէ բարոյական համակեցութեան համար: Խառնուրդը միմեանց օտար ազգերի մէջ, ոչ թէ սարեկան և ամբողջ ազգութիւնների, այլ զանազան անհատների, որոնք ունին ինքնուրոյն գոյութեան պայմաններ, դարձեալ հասցնում է ամուսնացողներին վերոգրեալ հետևանքներին:

Մենք դիտմամբ մասնաւոր ենք անում վերոգրեալ անբնականութեանց վերայ ամուսնութեան մէջ այն սովորական պատճառով, որ այդ տխուր երևոյթները համարեա ամենայն օր հանդիպում են մեզ մեր կեանքի մէջ յիշեցնելով մեզ մեր միշտ շեղվելը ամուսնութեան բնական սահմաններից և եթէ կարելի է ասել պայմաններից:

Ուշադրութեան արժանի է ներկայ խնդրի մէջ մի բան ևս, այն է նիւթական իրաւասութեան հետևանքները, որոնք սերտ կապ ունին ամուսնութեան անբնական գոյացութեան հետ: Ժառանգութեան իրաւանց հարցերի լուծումն շատ դժուարանում է, և ամուսինների (կնոջ) նիւթական միջոցներն ըստ մեծի մասին անտանելի են լինում, պայմանաւորվելով մէկ կողմից տղամարդի իրաւունքով քաշ տալ իւր կնոջը ուր կը կամի համակեցութեան համար, և միայն այդ առթիւ տալ ապրուստի միջոց իւր կնոջն և միւս կողմից նորանով, որ մարդը գլուխ է և իշխան ընտանեկան կեանքի մէջ, իսկ կնոջից պահանջվում է միայն հնազանդութեան պարտաւորութիւն: Նշմարվում է նմանապէս մեր քաղաքակրթեալ ժողովրդի դասումը անձնական անհամաձայնութիւններ ընտանիքի մէջ, որն հասնում է քրէական դատարանին: Սոքա են անբնական հետեւանքները անբնական, ինչպէս ասացինք՝ ամուսնութիւնների:

Առօրեայ դիտողութիւններից սովորված դարձնելու մեր Հայ ժողովրդի ուշադրութիւնը վերոգրեալի վերայ, մենք կը ցանկայինք նրան խոհեմութիւն և հետևողութիւն բնութեան և հասարակական ցուցմունքին, որ նա պատուիրանազանց չըհանդիսանայ բնութեան պահանջմանց, անհատական իրաւանց պահանջմանց, և ազգային իրաւանց պահանջմանց դէմ: Պէտք է հասկանալ, որ առանձնապէս ամուսնութեան մէջ, եթէ քակտվում է միանգամ նորա բարոյական գոյութեան կապն և համեմատութիւնը, մեքենայական — միութիւնը չի ունենալ ոչ մի հետևանք: Ուրեմն այստեղ ևս ծայրայեղութիւնը վնասակար է:

Ս. Ա.

Գ. Խզմիրեանցը հետևեալ նամակը ուղարկել է մեզ ի հրատարակութիւն, որպէս պատասխան:

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Այս տարուայ Նոյեմբերի 23 ին Մեղուի(?) լրագրի մէջ համար 47 եր. 4. կարդացի մի ընդհանուր դատողութիւն իմ գրած «Սիրահար» վերտառութեամբ երգի համար (վերամ), որ երգվեցաւ Հայի (?) Թատրոնական բեմի վերայ այս ամսի 17-ին.(:) Ես կը ցանկայի, որ այսպիսի անճոռնի և անշնորհ հայեացք ունեցողը (sic) իմ գրածիս վերայ ժանրամաս(ն) դատողութիւն էր տուել(!) գրածիս վերայ(1), որ կարողանայի պատասխանել, եթէ ոչ (;) ես նորա բոլոր ասածը, այն է:(.) «զարմանում ենք, որ այսպիսի բանաստեղծական շնորհքից, մտքերի հետևողութիւնից եւ լեզուի ճոխութիւնից զուրկ գրվածք դրականական ասպարէզ դուրս են գալիս», իբրաւունք կունենամ համարել կամ կրքերի հետևանք և կամ թէ իրաւ բանաստեղծական շնորհքից և առողջ դատողութենից զրկուած մարդոյ հայեացք 2), բայց որ նորա մէջ կար և նազ և սազ, սորա ապացոյցը այն է, որ ժողովուրդը ոչ թէ երեք անգամ ծափահարութեամբ կրկնել տուեց այս երգը 3), այլ և շատերը, որոնց տպած թերթերը չը հասան, այն գիշերը և միւս օրը գալիս էին երգող տիկին Սաթենիկի մօտ և խնդրում էին որևիցէ կերպիւ ճարէ (ել) նրանց համար այն երգը 3). իսկ [illegible] ցանկալիս և նազելիս» «և ոչ թէ սիրելի, ցանկալի և նազելի» այս ես թողլ եմ տուել ինձ միայն երգի տողերու (տողերի) վերջին ձայնի համար(!?), ինչպէս լինում է և շատ բանաստեղծական և երևելի հեղինակների գրուածների մէջ, որպիսի կրկնութիւնները, իբր պատասխան, ես տասը կըբերեմ, իրա ժամանակին, եթէ կլսեմ մի կարգի(ն) և ոչ թէ վայր ի վերոյ դատողութիւն և բառարանի(?) խօսքեր(4).(:)

Գր. Խզմիրեանց.

---

1) Մի գրուածք, որ ամփոփ բովանդակութիւն չունի, այլ մի սիրահարի այրուած սրտի զգացմունքն արտայայտելու համար խօսքերի եւ նախադասութիւնների խառնաշփոթ կուտակումն է, չը գիտենք, թէ որպիսի մանրամասն քննութեան կարող է ենթարկուիլ կամ արժանանալ:

2) Մենք բանաստեղծական շնորհքի իրաւունք մեզ համար պահանջած չենք, պ. Սիրահարի հեղինակի նման. իսկ ինչ կըվերաբերի առողջ հայեացքին, չը գիտենք թէ ում դա մասն եւ բաժին կընկնի — թող վճռէ այդ պարոնի վերեւ տպած նամակի բովանդակութիւնը:

Սիրահարի հեղինակի մտքերի անհետեւողութիւնն եւ երեւակայութեան անհեթեթ ծնունդը ցոյց տալու համար առաջ ենք բերում նորա երգի մի քանի տողերը:

Սիրոյ բոցը ինձ պատել է
Բոլոր ջանս բորբոքել է ([illegible] է)
Կամաց կամաց ինձ այրում է (շատ Թոյլ է)
Հոգիս մարմնից անջատում է ([illegible] է)

—

Արտասուքս կըթափին գետնին (հառաչանք է)
Ծով կըշինեն հողի տակին ([illegible] է)

3) Երգողին էին վերաբերելի ծափահարութիւնքըն, թէ երգին, պ. Գր. Խզմիրեանց:

4) Ինչ վերաբերում է հեղինակի լեզուի ճոխութեան եւ արհեստին, թող վկայէ նորա նամակը, որ տպել ենք բառ առ բառ, տառ առ տառ: Նորա թերութիւնքն ոչ տպագրական են եւ ոչ սրբագրական, այլ իրան հեղինակի հայագիտական սեփականութիւնը: Մենք փակագծերի մէջ տեղ տեղ սրբագրել ենք նամակը ընթերցողներին հասկանալի կացուցանելու համար:

Խմբ.

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Նոյեմբերի 29-ին.

Ոսկին (պօլուիմպերեալը)...	5 — 80
Արծաթը հին մանէթ......	1 — 12
Հին աբասանոցն (5 հատը)	1 — 5
Փոխանակագիր Պօլսում վճարելիք Օսմանեան լիրա	6 — 65
Փոխանակագիր Պարսկաս.	4 — 49
» » անգղիական լիրան	7 — 16
Լասարի բլիթն առաջին	189 — "
Երկրորդը	...188 — "
Բամբակը Երևանի, ...	5 — 20
Ամերիկայի սերմից	7 — 20
Ցորենը տեղական	8 — 10
Որդան կարմիր առաջինը	...115 — "
« » երկրորդն ...	80 — "
Մետաքսը Նուխու լաւը	...135 — 50
— Իմէրէթու	...115 — 50
Բուրդը Թուշու	6 — 80
Թարաքամի	4 — 70
Շաքարը աւս...	8 — 70
Արտասահմանեան... ...	8 — 30
Շաքարաւազը	7 — 60
Տխախոտը Տրապիզոն լաւն	14 — 70
Սամսոնը 10կց— 50ը —	"
Կեօրակի 25կց— 75ը —	"
Բօլշոյի 15կց— 55ը —	"
Սուրճը Մոկկոյի... —	18 — 90
Լեօնչկին (հասարակ) ...	16 — 20
Մոմը բնաճարպի (սաէարին)	10 — 40
Ճրագուի	5 — 20
Երկաթը ձողաձև (բրուսկ)	3 — "
Ցախառակ (լիստովի)...	4 — "
Մեխացուն	3 — 10
Ցինկ	5 — 30
Պղինձը անգլիու	14 — 20
տեղական	10 — "
Անագը (կլյակ)...	14 — "
Անուշադրը (նիշադուր) ...	7 — 80
Աղը հասարակ	" — 70
Պղպեղը	11 — 60
Լեղակը, առաջինը	15 — 60
» » երկրորդն	8 — 50
Ալիւրը հասարակ	1 — 25
Պետանովինն (Ջվալը)	20 — 50
Ալավերդովինը...	1, 15 — 10
	2, 12 — 80
	3, 10 — 60
[illegible]	14 — [illegible]
Բրինձը Լանքորանի... ...	2 — 60
Գարին	" — 75
Սպիրտ 83 աստիճանի...	7 — 63
Նաւթը	2 — 80
Օճառ (սապոն)...	3 — "
Իւղը	11 — "
Ձէթը կտաւատի...	4 — 90
Կնճիթի (քունջութի) ...	8 — "
Շիլան	2 — 40
[illegible]	6 — "
Սրճին	4 — 80
Մեղրամոմ	24 — "
Խունկն	8 — "
Ջաղն	2 — "
Վերմիշել և մակարօն Ռուսս.	5 — "
Օդեսու	6 — 25
Տեղական... ...	4 — 35
Մաքոյ սպիտակն...	4 — 80
Գրեչնեւի...	1 — 70
պերլովիյ	4 — 80
Կրուպայ Մաննիյ	3 — 25
Կրուպչատկան Ն. Բաբանասովինը և ընկ. ...	№ 1) 14— 10
	№ 2) 10— 50
	№ 3) 8— 70

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Փոստը

ՌՈՒՍԱՍՏԱՆ, ՍԻԲԻՐ ԵՒ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ [illegible], (բացի Պարսկաստանից և Ասիական-Տաճկաստանից) գնում է ամեն օր բացի կիրակի օրից.

ԵՐԵՒԱՆ — Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ — Չորեքշաբթի և ուրբաթ.
ՆՈՐԲԱՅԱԶԷԹ — Չորեքշաբթի.
ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹ. ՎԵՐԱՑ ԳՏԱՆՎԱԾ ՏԵՂԵՐԸ — Ամեն օր, բացի կիրակի.
ԶՈՒԳԴԻԴ — Չորեքշաբթի.
ՕԶՈՒՐԳԷԹ — Երկուշաբթի և ուրբաթ.
ԱԽԱԼՑԽԱ — Երկուշաբթի և ուրբաթ.
ԲՈՐԺՈՄ — Երկուշաբթի և ուրբաթ, իսկ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը ամեն օր, բացի կիրակի օրից.
ԲԵԼԻ-ԿԼԻՒՉ (Ալէքսանդրովսկ) — Երկուշաբթի և ուրբաթ.
ԲԱՔՈՒ ([illegible]) — Երկուշաբթի, երեքշաբթի և ուրբաթ.
ՆՈՒԽԻ, ՑԱՐՍԿԻ - ԿՈԼՈԴՑԻ ([illegible]) և ԶԱՔԱԹԱԼԱ, ՍՂՆԱԽ, ԹԵԼԱՒ և ԼԱԳՕԴԵԽ — Երկուշաբթի և շաբաթ.

—

ՓՈԹԻ—ԹԻՖԼԻԶԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

ԹԻՖԼԻԶԻՑ գնում է ճանապարհորդների գնացքը առաւօտեան 8 ժ. 18 ր. և հասնում է ԽԱՇՈՒՐ 1 ժ. 11ր. և ՓՈԹԻ գիշերուայ 11 ժ 27 ր. Խառն գնացքը գնում է՝ ԹԻՖԼԻԶԻՑ երեկոյեան 8 ժ. 17 ր. և հասնում է ԽԱՇՈՒՐ առաւօտեան 4 ժ. 30 ր:

ՓՕԹՈՒՑ գնում է ճանապարհորդների գնացքը առաւօտեան 7 ժ. 38 ր. եւ հասնում ԽԱՇՈՒՐ 5 ժ. 11ր և ԹԻՖԼԻԶ գիշերուայ 10 49 ր.:

ԽԱՇՈՒՐԻՑ առաւօտեան 7 ժ. 15 րոպ. եւ հասնում է ԹԻՖԼԻՍ 3 ժ. 13 ր. ճաշից յետոյ

—

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ (Մուզէում) բաց է Երեքշաբթի, Ուրբաթ և Կիրակի օրերը առաւօտեան 10 ժամից մինչև կէս օրից յետոյ 3 ժամը:

—

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ երթևեկ հիւանդների համար գտնվում է Սեմինարիայի դիմացը Ց. Ջիթախեանի տանը: Հիւանդներին ընդունում են ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 12 ժամը:

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Համբարձում Ենֆիաճեանցի և ընկ. տպարանումը վաճառվում են շահաւոր պայմաններով, նոյն տպարանի հաշւումը հրատարակուած հետևեալ գրեանքը,

	1 օրինակի.	10 օրինակի.	25 օրինակի.
1) ԱՒԵՏԱՐԱՆ ՃԱՇՈՒ եւ իւրաքանչիւր աւուրց ի տարւոջն, ի վերջոյ ունի եղեալ յաւելուած, Աւետարանացն՝ [illegible]. Տպած է կարծր եւ մաքուր թղթի վերայ, խոշոր դառով, եւ մեծ գիրքով. Տփխիս 1867.	1,50կ.	10 ռ.	20 ռ.
2) ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԴԱՐՈՒԵՐԻ, միջին կարգի ազգային դպրոցաց համար, աշխատասիրութիւն պ. Պետրոսի Սիմէօնեանց, աշխարհիկ բարբառով, կարծր թղթի վերայ մաքուր տպած. Տփխիս 1867 տ. 8⁰ (ութածալ), եր. 162,	50 կ.	4 ռ.	8 ռ.
3)—Նոյն, միջին դարերի, Տփխ. 1867 տ 8⁰, եր. 129,	45 կ.	3 ռ.	6 ռ.
4) ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ եւ սկզբնական ընթերցանութեան դասագիրք, այլ եւ այլ գործնական կրթութիւններով, աշխատ. Ստ. Պալասանեանի. Տփխիս. 1865 տ. 8⁰ եր. 96	20 կ	1,50կ.	4 ռ.
5) ՀԱՍՈՒՆԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ. երեսունհինգ ամեայ պատմութիւն Հասունեան Անդոն վարդապետի Ց. Ասկէրեանի. 1868. Տփխիս տ. 8⁰ եր. 528	1 50կ	10 ռ.	20 ռ.
6) Հայկական Թատրոն. ԳԻՇԵՐՎԱՆ ՍԱԲԲԸ ԽԷՐ Է Տփխիսու կեանքից փոքրիկ մէկ արարուածով, Հեղինակ. Գ. Սունդուկեանցի. Տփխիս 1866 տ. 8⁰ եր. 25	10 կ.	75 կ.	1.25կ.
7) Հայկական Թատրոն. ԷՍ ԷԼ ՄՕՏԻՔԻԼՈՒԹԻՒՆ, կամ ղալմաղալ, ճաշ, [illegible] փոքրիկ մէկ արարուածով. Տփխիսու կեանքից, Հեղինակ Մ. Տէր Գրիգորեանց. Տփխ. 1866, տ. 8⁰ եր. 31	10 կ.	75 կ.	1.25կ.
8) ՄԱՏԱՂ ՀԱՍՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆ. կամ մարմնաշարժութեան (ձեռնամոլութեան) վտանգաւոր հետեւանքները. Տփխիս 1866 տ. 8⁰ եր. 81	10 կ.	50 կ.	1 ռ.
9) ԿԵՐԱԿՈՒՐ ՄԱՐԴՈՅ, որոյ մէջ պարզ եւ հետաքրքրական ոճով բացատրուած է քաղցը սովամահը, ծարաւը, ինչով կերակրվում եւ ինչ են խմում մարդիկ զանազան կողմերում, մարդակերների նկարագրութիւնը, օդի կարեւորութիւնը. Թարգմ. Ց. Մաղաքեանցի. Տփխիս 1871 տ. 12⁰ 89 եր.	20 կ.	1,50կ.	2,50կ.
10 ՍԻՐԻՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻԴ, պատմութիւն դաղթականների կեանքից հիւսիսային Ամերիկայում, Թարգմ. Ց. Միրզաբէգեանց Տփխիս 1869 տ. 12 եր. 150	25 կ.	2 ռ.	4 ռ.
11) ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ Տփխ. Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի. Տփխ. 1866 տ. 12⁰ եր. 32	30 կ.	2 ռ.	3,75կ.
12) ՆՐԱԳԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԻՆ. եւ տեսութիւն Հայաստանի եւ նորա այժմեան վիճակին վերայ, Կարապետ վարդապետի Շահնազարեանց. Տփխիս 1863 տ. 3⁰ եր. 112	80 կ.	6 ռ.	12,50.
13) ՊԱՐԱՊ ՎԱԽՏԻ ԽԱՂԱԼԻՔ, որ է աշխարհիկ բարբառով, ազգային եւ արեւելեան առակներ, առասպելներ, ասացուածքներ, եւ ի վերջոյ, Թաղերգութիւն, ֆէօդորը, կամ որդիական սէր, Աբովեանի. Տփխիս. 1864 տ. 12 եր. 138	60 կ,	4 ռ.	7.50կ
14 ՀԱՍԱՐԱԿԱՑ ԲԺՇԿԱՐԱՆ. Ա. Ցանկարծ մահ պատճառող դիպուածները եւ նոցա առ տնին դեղերը, Բ. Շնչառութեան գործարանների ախտերը. Գ. Արիւնաշրջութեան ճանապարհների եւ սրտի ախտերը, բժիշկ Գ. Ռոստոմեանցի. 1862 Տփխիս տ. եր. 96	60 կ.	4 ռ.	7,50կ.
15) ԱՂԱՍԻ, Ազգային ողբերգութիւն հինգ արարուածով, (Խաչատուր Աբովեանցի «Վէրք Հայաստանի» վէպը թատերգութեան փոխադրուած) պերճ Պռօշեանցի. Տփխիս 1863. տ. 8⁰ եր. 75	50 կ.	3,50կ.	
16) ԵՐԿՈՒ ՔՈՅՐ, եղերական վէպ (ազգային) գիւղական կեանքից, Ղազարու Աղայեանց. Տփխիս 1872. տ 12⁰ եր. 108	50 կ.	4 ռ.	7,50կ.
17) Արհեստ քաղցրաւենիք (մուրաբա) շինելոյ, Ցովհաննու Մամիկոնեանց Տփխիս 1861 տ. 12⁰ եր. 136	50 կ.	3 ռ.	7,50կ.
18) ԿՌՈՒՆԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ ամսագիր բարոյական, բանաստեղծական, նկարագրական եւ վիճակագրական 1860, 1861, 1862 եւ 1863 տարիների, իւրաքանչիւր տարուան տետրակները երկու թղթակազմ հատորի մէջ ամփոփուած,	8 ռ.	60 ռ.	125ռ.
19) ՄԵԾ ՄԱՐԴԿԵՐԻ պատմութիւններ, միջին եւ նոր դարերում. փոխադրեց Գ. Տ. Մ. Թիֆ. 1873 տ. 16. 261 եր. գինն է 1. բայց այժմ ծախվում է	30 կ.	2 ռ.	4 ռ.

Պարապելով մանկավարժութեամբ ունիմ մի քանի գրուածքներ և թարգմանութիւններ Հայ լեզուաւ այս առարկայի վերաբերեալ: Ամեն Հայ գիտէ, թէ մանկավարժական գրքերի պակասութիւնը որքան մեծ է մեր մէջ. ուստի և կը յուսամ, որ կը գտնվին մեր մէջ անձինք, որոնք յանձն կ'առնուն այս աշխատութեանցս տըպագրութեան ծախսը, յայտնի բան է այն պայմանով, որ գրքերի վաճառումից առաջ կը վճարվի այդ գումարը: Շատ ցանկալի կը լինէր ինձ, որ նախ տպվէր իմ յօրինած սկզբնական դասագիրքը երեխայոց համար: Այս աշխատասիրութիւնս բաղկացած է երեք գրքոյկներից 100 պատկերներով: Սորա տպագրութիւնը մերձաւորապէս կը նստի 400 ռուբլի: Ցանկացողք տպել այս գիրքը կարող են դառնալ իրան աշխատասիրողին հետևեալ հասցէով: С. Петербургъ. по Большой Подъяческой д. № 7, кв. № 11, Аслану Термикелову.

Ասլան Տէր–Միքայէլեանց.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ. 29-го НОЯБРЯ· 1874 г,
Типографія А. Энфіаджіанцъ и К-⁰
Տուն Բժշկապետ Մ. Ռոտինեանցի.